ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 20-Լ «» 11 06 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.06.2019

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի
2019թ. հունիսի___-ի N ___ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչությունը (այսուհետ՝ վարչություն) նախարարությանն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն անմիջականորեն ենթարկվում է նախարարության գլխավոր քարտուղարին: Վարչությունը հաշվետու է նախարարին և գլխավոր քարտուղարին:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, նախարարության նորմատիվ ու իրավական այլ ակտերով, նախարարության և սույն կանոնադրությամբ:
3. Վարչության կանոնադրությունը հաստատում է նախարարը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝

1) կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մշակումը.
2) կրթության, մշակույթի և սպորտի զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակումն ու դրանց մոնիթորինգը.
3) կրթության զարգացման պետական ծրագրից բխող նպատակային ծրագրերի իրականացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5. Վարչությունը կազմված է վարչության պետից, վարչության պետի տեղակալից և մասնագետներից:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունն իր հիմնական նպատակներին ու խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝
1) մասնակցում է կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մշակման աշխատանքներին.
2) կազմակերպում և համակարգում է կրթության և մշակույթի զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման, դրանց մոնիթորինգի և գնահատման աշխատանքները.
3) մասնակցում է պետական ռազմավարական ծրագրերում կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների ծրագրերի, ինչպես նաև կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների միջնաժամկետ ծրագրերի մշակման աշխատանքներին.
4) մասնակցում է կրթության և մշակույթի բնագավառներում միջազգային համագործակցության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին.
5) կազմում է տեղեկանքներ կրթության զարգացման պետական ծրագրի, կրթության ոլորտի ռազմավարական ծրագրերի կատարման վերաբերյալ, պատրաստում ամփոփ հաշվետվություններ.

6) մասնակցում է կրթության զարգացման պետական ծրագրից բխող նպատակային ծրագրերի իրականացմանը.
7) առաջարկություններ է ներկայացնում այլ կազմակերպությունների կողմից մշակված կրթության բնագավառի զարգացման ծրագրերի՝ կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխանության մասին.
8) համակարգում է կրթության ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրների վարման աշխատանքները.
9) նախարարության ստորաբաժանումներից ստանում է կրթության զարգացման պետական ծրագրից բխող նպատակային ծրագրերի, կրթության բնագավառին առնչվող պետական ռազմավարական ծրագրերի իրականացման և մոնիթորինգի ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ և ամփոփում դրանք.
10) նախարարի հանձնարարությամբ պատրաստում է կրթության և մշակույթի բնագավառների վերաբերյալ վերլուծական և իրավիճակային հաշվետվություններ.
11) համակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրից և գերակա խնդիրներից բխող կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների միջոցառումների իրականացումը.
12) նախարարության ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա պատրաստում է նախարարության գործունեության տարեկան հաշվետվությունը.
13) իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված կրթության և մշակույթի բնագավառների զարգացման ծրագրերի մշակման և իրականացման հետ կապված այլ գործառույթներ:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

7. Վարչության գործունեությունը համակարգում և ղեկավարում է վարչության պետը, ով պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում օրենսդրությամբ սահմանված կարգով:
8. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում է վարչության պետը:
9. Վարչության պետը և աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:
10. Վարչության պետի և աշխատողների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներն ու կոմպետենցիաները, կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում են օրենքով սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով (աշխատատեղի նկարագրով):